



# Հակոբ Պարոնյան

## Ազգային շոջեր

### ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ

Ինչո՞ւ կը քնանաք, ո՛վ պուլտներ, որ երկու յանգ գտնելու համար Պատնասը կը շրջապատէք, որպէսզի Մուսայի մը թելէն քաշէք եւ ողորմութիւն խնդրէք իրմէ, նման այն մտրացկաններուն, որ եկեղեցիներու շուրջը կը շարուին: Ինչո՞ւ կը խորդաք, ո՛վ գրագէտներ, որ ձեր հրաշագործ գրիչն երբ մարդու դպցունէք՝ կենդանի ի կը փոխարկէք գայն եւ երբ անասունի գարնէք՝ մարդու կ'այլափոխէք: Արթնցէ՛ք, ի ծունր իջէք, բացէ՛ք ձեր գլուխներն, որպէսզի ամէն մարդ տեսնէ անոնց ունայնութիւնը: Միսաքեանի ճամբուն վրայ փռեցէք ձեր հագուստներն, խունկ վառեցէք, որպէսզի հաճի աշխարհ գալ ձեր Պետն, որ սովորութիւն ունի չմօտենալ երբեք այն մարդերու, որ բուրվառով չեն ներկայանար իրեն: Ինչո՞ւ կ'անչնաք հիմա գինքը պաշտելու: Ժամանակով մարդերն երկրպագութիւն ըրած են այնպիսի աստուածներու՝ գորս մենք այսօր կը մորթենք, կասկարայի վրայ կը խորովենք, կ'ուտենք եւ վրան պատուական գինի կը խմենք: Օն անդր, պագէ՛ք երկիրն, խունկ ծխեցէք իւր քթին, խնդրելով իրմէ, որ աթոռ մը առնէ եւ գայ նստիլ Ազգային Չոջերու քով, ուր խունկը հագուագիտ է: Մի՛ վախնաք, ո՛վ բարեկամներ պուլտիս, չպիտի մորթեն գինքն, ոչ ալ մի սագի փետուրով պիտի հարուածեն գինքն, այլ պարզապէս պիտի պատմեն իւր վարքը, պիտի գովեն իւր տաղանդն, եթէ ունի: Մտիկ ըրէք ուրեմն, բայց մի՛ խնդաք, կը սրդողի:

1816 թուականին ծնած է Խաչատուր Միսաքեան, որ դասատու անուանուած է շատերէն, ազգային երեսփոխան ընտրուած չգիտեն ո՛ր թաղէն, պուլտ յորջորջուած է տղաներէն եւ իւր պուլտ ըլլալը հաստատելու համար վկայ մը

փնտրած է եւ չէ յաջողած գտնել մինչեւ այսօր:

Իննամսեայ առանձնակեցութիւնն այնքան սիրեց, որ սենեակին մէջ կիներու բազմութիւնը տեսնելով կը դժկամակէր ի լոյս գալ: Ոչ միայն ընկերութենէ չախորժելուն համար, այլ իւր ճաշակին համեմատ բարձր դիրք ունեցող եւ ծովահայեաց տուն մը գտնելու դժուարութիւնն զգացած ըլլալով, կը փափաքէր միշտ արգանդաբնակ մնալ: Սակայն նկատելով, որ Բնութեան օրէնքներուն դէմ յամադիլն անօգուտ էր, հաճեցաւ ծնիլ:

Խաչիկ մարմնով այնքան շուտ կը մեծնար եւ կ'աճէր, որ երեք ամսու եղած ժամանակն անբաւելի էր մէկ օրօրոցի: Կը խաբուէր մանուկն, կարծելով՝ թէ մարդուս անունն ալ անոր մարմինին պէս դիրութեամբ կրնայ մեծնալ եւ Եպիմենիդէսի պէս յիսունեօք տարի քնանալով մեծ անունի տէր ըլլալ: Ծնողքն երկու օրօրոց քովէ քով դրին, որուն միոյն մէջն էր Խաչիկի գլուխն եւ միւսին մէջ մարմինը: Այս մեծ տղան խանձարորի մէջ հասկցուց իւր մօրն, թէ բանաստեղծութեան կոչուած է եւ թէ ժամանակ չունի տրամաբանութեան երթալու: Երբ մայրն օր մը ոտանաւոր օրօրով մը տղան քնացնելու կ'աշխատէր՝ Խաչիկ մէկէն ի մէկ մօրն երեսն ի վեր պոռաց, թէ ոտանաւորէն վանկ մը կը պակսէր եւ չքնացաւ մինչեւ որ մայրը համոզեց զինքը, թէ երգած ոտանաւորը կաղ էր:

Վեց տարեկան ըլլալուն պէս Իսկիտարու վարժարանը դրկուեցաւ, ուր ինը տարի շարունակ աշխատելով կատարելապէս սորվեցաւ Քերականն, Սաղմոսն ու Գործք Առաքելոցը: Ջարմանալի էին այն ատենուան վարժարաններն՝ որոնց մէջ աշակերտ մը իւր գործերուն խելք շհասուցած՝ առաքեալներու գործերուն վրայօք տեղեկութիւն կ'առնէր: Միսաքեան վարժարանէն ելնելուն պէս սկսաւ տուներու մէջ այցելութեամբ դասախօսութիւն ընել:

1839-ին դասատուութեան պաշտօնով Ճեմարան մտաւ: Հոն շարունակ կը կարդար Հոներոսն, Վիրգիլիոսն, Ովրատիոսն, Ովիտիոսն եւ այն ամէն քերթողներն, որոնց անուններն ու կը վերջանային: Առաջին անգամ հոն պուէտ յորջորջուեցաւ Միսաքեան: Ես որ հասարակութեան կը խօսիմ եւ սուտ խօսելէ կը վախնամ, կը յայտնեմ, թէ Միսաքեան ինք վաստկած չէ պուէտ անունը, ուրիշէ մը ժառանգած է գայն: Յայտնի է արդէն, որ ամէնէն մեծ անիրաւութիւնները ժառանգական

խնդիրներու մէջ կը գործուին: Հանճարն ոչ ազգութիւն ունի եւ ոչ կրօնք եւ իբրեւ ոսկի իւր արժէքը կը գտնէ ամէն տեղ: Հանճարի ծնունդ եղող բանաստեղծութիւն մը լաւ ընդունելութիւն կը գտնէ Անգղիայէն, որչափ ալ անոր հեղինակն սլաւ ըլլայ: Իսկ մենք հանճարահանդէսի մը մէջ ի տես աշխարհի դնելու համար քանի՞ քերթուած ունինք: Մենք դժբախտաբար ոսկի կ'անուանենք ինչ որ պղինձ է եւ որ սակայն ոսկիի պէս կը հնչէ ժողովրդեան ականջներուն: Իմ կարծիքովս բանաստեղծութիւն մը, ոտանաւոր կամ արձակ, կամ ընտիր ըլլալու է եւ կամ բնաւ ըլլալու չէ: Կը ճանաչեմ երիտասարդներ, որ ինքզինքնին բանաստեղծ կ'անուանեն եւ յանգ մը գտնելու համար իրենց գրածն հազար անգամ կը սրբագրեն, նորէն կը գրեն, կը գծեն, յանգի մը համար հարիւր թերթ թուղթ կը պատռեն եւ երբ յաջողին իրենց փնտռածը գտնել եւ տողին վերջը տեղաւորել՝ կը տեսնեն որ այդ ոտանաւորով ցամաքի վրայ նաւարկութիւն կ'ընեն եւ ծովու վրայ ձիարշաւ: Երբ մարդ մը գովել ուզեն եւ դիպուածն առաքինի բառն դնէ տողին վերջը, կը սկսին մտմտալ եւ տարի մը խորհելէն վերջը յիշեալ առաքինի մարդը գինետունէ գինետուն կը պտտցունեն եւ մեծ առաքինի գինեմոլ մը ներկայացնելու որոշում կու տան: Ինչո՞ւ: Վասն զի ոտանաւորն նոյնայանգ ընելու համար առաքինիի մը գինիէն աւելի ի՞նչ բան կրնայ յարմարիլ:

Բայց մարդը կեանքին մէջ գինի դրած չէ բերանը. որո՞ւ հոգ. առանց գրպարտելու ոտանաւոր գրելը դիւրին բա՞ն է: Իսկ վա՛յ ան մարդերուն, որոնց վրայ գրուած ոտանաւորներուն մէջ վանկ մը կը պակսի, վասն առանց հրաւերի կու գայ այդ պակասը կը լեցունէ: Այսչափ չէ, սպանութեան ալ կը դիմեն. բառերն իրենց ձեռներուն մէջ այնքան արժէք ունին, որչափ լաթի մը կտոր դերձակներուն քով. գլխէն, մէջքէն կամ պոչէն կը կտրեն զանոնք. մեր լեզուին բառերն անկարելի է ճանաչել անոնց ոտանաւորներուն մէջ. ասելը սելի կը փոխուի. նուէրը երբ ոտանաւորի մէջ ներկայանալ ուզէ, գլուխ կը բանայ եւ ուեր կը մտնէ հոն: Աւելի՛ն կայ. երբ արեւուն ծագումը ծանուցանել ուզեն ասոնք՝ ամէնը մէկէն վարդամատն Արշալոյսին կը դիմեն. որո՞ւ երթայ խեղճը, հազար մատ ալ ունենար՝ չէր կրնար ամէնը գոհ ընել: Փափիկ, լուսին, սրինգ, մարգագետին, սոխակ, մանաւանդ կուսիկ իրարու ձեռներէ կը յափշտակուին եւ կ'երթան մտնել ամէն ոտանաւորներու մէջ: Երբ բանաստեղծութեան գիրք մը կարդալ ուզես՝ կը տեսնես, որ թուղթերն իրենք իրենցմէ կը դառնան, վասն զի իւրաքանչիւր էջին մէջ գեփիւղը կը փչէ, շնոռանք ըսել, որ եթէ առանց հովանոցի զանոնք կարդալու

ելնես՝ եգիպտացի մը կը դառնաս, այնչափ կ'երիս արեւն, որ իւր ճառագայթներն միշտ արձակած է հոն: Փառք տուր Աստուծոյ, եթէ հոն փշած սիւքէն մտելով չհիւանդանաս: Դեռ քանի մը շաբաթ առաջ մէկը Մասիսի մէջ ջրհեղեղ մը նկարագրած էր, որուն մէջ մագ էր մնացեր, որ Նոյ նահապետն ալ խղղուէր. Աստուած իսկ ջուրերուն մէջ պիտի մնար, եթէ առաջուց չփախչէր: Երբ քննադատ մ'ելաւ եւ դիտողութիւն ըրաւ, սա պատասխանն առաւ, թէ մի՞թէ Ամենակարողն Աստուած կարող չէ ինքզինքն ազատել: Եթէ Պատնասայ տնօրէնութիւնը երբեմն տպագրական տեսչութեան անդամ Պատնասեանի յանձնուած ըլլար՝ այդ քերթողները կը պատժուէին Ապողոնն այսչափ ստորնացուցած ըլլալուն համար: Ես որ նախապատիւ կը համարիմ ոսկի շունիմ ըսելը, քան կտոր մը պղինձն իբրեւ ազգային ոսկի ներկայացնելն եւ ծաղու նշուակ ըլլալն, ես որ վերջապէս չեմ կարող պղինձն ոսկի անուանել, ի՞նչպէս յանդգնիմ այսօր Միսաքեանը պուլտ յորջորջել, մանաւանդ թէ ասպարեզի վրայ ոտանաւոր մը միայն ունի, որ աւելի անօթութենէն ներշնչուած է, քան թէ մուսաներէ:

Այսպէս, Միսաքեան գրական ասպարեզին վրայ հարստահարիչ քիւրտի մը պէս ուրիշներու ստացուածքն յափշտակելով, իբրեւ մի սագ պուլտի փետուրներով զարդարուելէն վերջը, Ճեմարանի աշակերտներուն դաս տալու տեղ սկսաւ ասպտակ տալ: Բնատրութիւն ունէր ճաշէն առաջ տղայ մը ծեծել ամէն օր. եւ ամէն անգամ, որ տնտեսը վարէն մեղայ վարժապետ ի ձայնն առնէր՝ Միսաքեանի կերակուրը պատրաստեցէք, կ'ըսէր:

Ճեմարանի գոցուելէն քանի մը տարի ետքը, քանի մը տղայ տուին իրեն, ոչ թէ զանոնք ծեծելու, այլ հետը Բարիզ տանելու եւ դպրոց դնելու համար: Միսաքեան առաւ զանոնք, Բարիզ տարաւ եւ տեղաւորեց. ինքն ալ սենեակի մը մէջ քաշուելով սկսաւ տքնիլ:

1860-ին խնդիր ծագեցաւ ազգին մէջ, թէ Երուսաղէմայ պատրիարքն ներսէ՞ն ընտրուելու է թէ դուրսէն: Միսաքեան, որ սենեակէն դուրս ելած չունէր՝ բնականաբար դուրսին վրայ գաղափար չէր կրնար ունենալ. ուստի Երուսաղէմայ պատրիարքութեան խնդիրն իւր սենեակին տեսակէտով ընթրնելով՝ կարծիք յայտնեց, թէ ներսէն ընտրուելու է:

Նոյն թուականին էր, որ Միհրաբեյամի խնդիր մը եղաւ բողոքականի մը հայերու գերեզմանատան մէջ թաղուելու խնդիրը: Յիշեալ բողոքականին մարմինը Պալըզլըի գերեզմանատունէն հանուելով բողոքականներու յատուկ գերեզմանի մէջ թաղուելէն երկու ամիս ետքը՝ Միսաքեան Բարիզէն կարծիք յայտնեց, թէ այդ մարդը հայ գերեզմանատան մէջ մտնելու իրաւունք չունի, թէ գերեզմանատունը եկեղեցի մ'է: Այն ատեն մեծ համբաւ հանեց այդ յօդուածն, որ համոզելու նպատակաւ գրուած էր անշուշտ եւ որուն մէջ ներկայ էր նաեւ գուարճախօսութիւն, գոր անխտիր ամէն գրութիւններուն մէջ կը գործածէ այս գրագէտն... թերեւս դամբանականներուն մէջ ալ. իսկ երբ այս տարի ամեն. Ներսէս պատրիարքն բողոքականի մը մարմինն Վանայ մէջ թաղել տալով անոր գերեզմանն արձանով մը պատուեց, անշուշտ լռելեայն հասկցուց մեզի, որ մենք ալ նոյն պատիւն ընենք Միսաքեանի այն յօդուածին:

Ազգին մէջ մեծ անուն հանելու փառասիրութեամբ արբշիտ՝ ուզեց Միսաքեան Ծաղկոցաձոր անունով հանդէս մը հրատարակել Բարիզէն: Նախ յայտարարութիւն մը հանեց, որ ուրիշ բան չէր, եթէ ոչ ընտրուած բառերու փունջ մը: Այս յայտարարութեամբ կը ծանուցանէր, որ հանդէս մը պիտի հրատարակէր եւ իր ընթերցողներուն լուսանկարութեան արուեստն պիտի ուսուցանէր: Հասարակութիւնն, որ Միսաքեանէ լուսանկարութեան տեղ ուրիշ բան մը սորվի կը կարծէր, հարկ եղած ընդունելութիւնն զլացաւ անոր եւ հետեւապէս ծաղիկները ձորի մէջ նետուեցան, թառամեցան: Բայց Միսաքեան չփիտեցաւ, լուսանկարութեան արուեստն առաջ տարաւ, որչափ որ կը ներէր իր սենեակն, որոս վերի յարկը կը բնակէին աստղերը: Իրեն այցելութիւն ընող ամէն հիւրերուն օձիքէն կը քաշէր, աթոռի մը վրայ կը բազմեցունէր եւ անոնց պատկերը կը հանէր:

Այն ատեններն էր, որ Հինձքի եղեռնագործութիւնը տեղի ունեցաւ: Մասիս, Մեղու եւ Մանգումէ ուժգնութեամբ կ'արձակէին իրենց նետերն Մեճմուայի դէմ, որ եղեռնագործներն կը պաշտպանէր: Միսաքեան ինքզինքը վիրաւորուած կարծեց, երբ տեսաւ, որ առանց իրմէ հրաման առնելու ազգային լրագիրներն արդարութիւնը կը պաշտպանէին. ուստի Բարիզէն պատգամ որոտաց, թէ լոնն ազգային լրագիրները եւ թէ ինքը պաշտպան պիտի կանգնի այդ դատին: Մեղու յանդգնեցաւ ծաղրել Միսաքեանի այս հրամանն եւ հետեւեալ օրհնութեան

կոնդակն ընդունեց իր վարժապետէն.

«Եթէ Մեղուի պէս ուրիշ աշակերտներ ալ ունինք, կը փափաքինք, որ անոնք Կիւբեղէի առջինեկներուն եւ կամ Բեթղեհեմի գաւակներուն հետ մէկտեղ ծնած ըլլային»:

Այս կոնդակն, ինչպէս յայտնի է, կը փափաքէր, որ Մեղուն եւ իր նմանները գետնին տակն անցնէին:

Այս աղօթքն ընելէն ետքը, առանց խնդիրն փաստաբանելու սկսաւ Մեծնուայի դէմ պաշտպանել ազգային լրագիրներն, որոնք բնաւ պէտք չունէին իր պաշտպանութեան: Յիշեալ գրութիւններն Տքնութիւնք Հայրենասիրի տիտղոսով տետրակի մը մէջ անփոփուած են, եւ որոնք բարձրաձայն կ'աղաղակեն, թէ Միսաքեան լոկ խօսքերու վարսավիրայ մ'է, որ ասդիէն անդիէն խօսքեր հաւաքելով՝ գանոնք կը սանտրէ, կը կոկէ, անուշաբոյր իղերով կ'օծէ եւ հրապարակ կը հանէ, եւ երկու տողով հասկնալի բան մը իր գրիչին տակ երկու էջի մէջ անհասկնալի կ'ըլլայ. եւ երբ վարսավիրայ մը կը տեսնեն, որ անմիտ երիտասարդի մը գլուխը բռնած ժամերով անոր վրայ կը խաղայ՝ կ'ըսեն. Միսաքեանը յօդուած կը գրէ. իսկ երբ այն երիտասարդին հետ խօսիմ եւ գլխուն արտաքին գարդն եւ ներքին ունայնութիւնը տեսնեն, կարելի չէ, որ յիշեն Միսաքեանի գրած յօդուածները:

1870-ին որոշեց այս մարդը Պոլիս գալ: Ի՞նչ նպատակաւ: Ահա իր ծրագիրը.

«Ա. Էջ մը առնել եւ երբեմն երբեմն վրան հեծնելով Ալեմ Տաղի երթալ.

Բ. Իսկիտարու մէջ ծովահայեաց տուն մը ուզել ազգէն.

Գ. Իրեն եւ իր իշուն ամսական մը պահանջել ազգէն.

Դ. Իր գործերը հրատարակելու համար քանի մը հարուստներէ դրամ հաւաքել.

Ե. Լրագիրներու մէջ յօդուած գրել, եթէ ազգն երթայ իր ոտները համբուրէ.

Զ. Ուզած մարդերուն հայիոյելու արտօնութիւն պահանջէ քաղաքավարութենէ»:

Այս ծրագիրը ծոցը դնելով ճամբայ ելաւ Բարիգէն եւ տասնօրեայ ճամբորդութենէ ետքը Պոլիս գալով՝ Ղալաթիոյ եկեղեցին իջաւ եւ նոյն երեկոյ հիւրընկալուեցաւ իւր մէկ բարեկամէն, որուն վրայ ետքէն կատաղաբար յարձակեցաւ: Ազգային մամուլը սիրալիւր ընդունելութեամբ բարեւեց այս պուլտին գալուստը. ողջամիտներն ուրախացան, որ հանճարեղ գրիչ մը կարգ ու կանոն պիտի դնէր ազգային գրական ասպարէզին, որ ասկէ տասը տարի առաջ ալ հիմակւրնէ մեծ տարբերութիւն չունէր: Բայց ի՞նչ օգուտ ունի սիրալիւր ընդունելութիւնը մարդու մը, որ էջ մը կ'ուզէ: Սիրալիւր ընդունելութեան վրայ չէր կրնար նստիլ եւ ոչ անով Ալեմ Տաղի երթալ:

1872-ին հարիւր ոսկոյ հանգանակութիւն մը եղաւ եւ գումարն իրեն տրուեցաւ, որպէսզի խաւարի մէջ մնացած հանճարն ի լոյս հանէ: Միսաքեան առաւ յիշեալ գումարն, որուն փոխարէն Գորտամկնամարտութիւն մը կարդացուց մեզի Փունջին դէմ՝ Մասիսի բացած դատին առթիւ: Հոներոսի Գորտամկնամարտութիւնը աւելի անյարմար տեղ չէր կրնար գտնել: Եթէ Միսաքեանին նպատակը փաստաբանել եւ համոզել էր, այդ խորագիրն նպատակին դէմ էր, եթէ գուարճացնել էր՝ գրութեան ձեւն իւր խորագրին հակառակ էր: Ի՞նչ էր ուրեմն նպատակը: Մենք մինչեւ այսօր հասկցած չենք: Չմոռնանք յիշել, որ այդ յօդուածն ուրիշ երկու երեք անուններ ալ ունէր. տօն մը պակաս էր սպանիացի ըլլալու համար: Գորտամկնամարտութենէն զատ քանի մը անգամ եւս գրելով Փունջի մէջ, վերջ տուաւ իւր յօդուածներուն եւ մանաւանդ այն ծիծաղներուն, զորս այնքան դիւրութեամբ կը հրաւիրէր իւր գրութիւններուն վրայ:

Տարի մը ետքը երեսփոխան ընտրուեցաւ, ուր մինչեւ այսօր կարծիք մը յայտնած չէ:

Քիչ մը ատեն դասատուութեան պաշտօն վարեց Իսկիւտարու Սելամիէի թաղին մէջ: Աշակերտներն պարտաւոր էին ֆրանսերէն Դելեմաքն գրաբարի թարգմանելէն վերջը թէ՛ ֆրանսերէնն ու թէ՛ հայերէնը բերնուց սորվիլ եւ Հայր մերի տեղ բարձր ձայնով գրուցել ճաշէն առաջ:

Հոս կը լմննայ ազգային պուլտին հրապարակային կեանքը:

Մտնենք հիմա քիչ մ'ալ իւր սենեակը, որ գիրքերով եւ պատկերներով լեցուած է: Եթէ Յոբնաղ մտնէր օր մը իր սենեակն, անշուշտ չպիտի վարանէր ըսելու.

«Խորին տգէտներ իրենց սենեակն գիտական Խրիստոպոսի մետաղիոններով կը լեցունեն. Արիստոտելին կամ Պիտտակոսին մէկ պատկերն ծախու առնելն եւ կամ իրենց մատենադարանին մէջ Կղէանդոսի մէկ ձեռագիրն ի տես դնելն իրենց համար կատարելութեան հասնիլ է»:

Մատենադարանին առջեւ նստած է ահա Միսաքեան. եթէ իւր կատուն կտոր մը փշրանք գտնելու համար կամացուկ մը դուռը բանայ՝ ահուդողի մէջ կ'իյնայ, որ չըլլայ թէ եկողը մարդ ըլլայ: Քանի մը վայրկեան վերջը մէկը ներս կը մտնէ իր սենեակէն, եւ ահա Միսաքեան իսկոյն բարկութեամբ տեղէն կ'ելնէ եւ կ'երթայ սենեակին սեմին վրայ կը նստի՝ ինքնիրեն մըմնալով.

«Սա մարդերու ձեռքէն բնաւ հանգստութիւն չկայ. վայրկեան մը հանգիստ չեն թողոր, որ մարդս առանձին նստի եւ ընելիքին վրայ խորհի, ազատութիւն չկայ աշխարհիս վրայ. կարծես բոլոր աշխարհ միացած է գիս նեղելու համար»:

Եթէ հիւրն իրեն որպիսութիւնը հարցնելու համարձակի՝ հետեւեալ պատասխանը կու տայ.

«Ծանր հիւանդ եմ. մինչեւ առաւօտ աչերս փակած չեմ. դուք չեկած քիչ մը աղէկ էի, բայց երբ դուք սենեակէն ներս մտաք, հիւանդութիւնս աւելի ծանրացաւ»:

Եթէ այս պատասխանին վրայ հիւրը յանդգնի հարցնել, թէ ի՞նչ է հիւանդութիւնը, մէկէն ի մէկ կը կանգնի եւ հիւրին երեսը ծուռ ծուռ նայելով՝ այսպէս կը պատասխանէ.

«Կարծեմ խօսելու ազատութեան հետ չխօսելու ազատութիւնն ալ յարգելու պարտաւոր ենք, եւ դուք բնաւ իրաւունք չունիք գիս խօսել տալու. մանաւանդ թէ խօսելու ժամանակ ալ չունիմ, վասն զի հիւանդ եմ: Բայց գիտեմ ես, մէկը դիտմամբ դրկեց քեզի հոս, որ գիս բարկացնես, արիւնս գլուխս ցատկէ եւ մեռնիմ»:



Եւ աւելն առնելով կը սկսի սենեակն աւել եւ փոշիներու մէջ խողով հիւրն, որ դուռը բանալուն պէս կը փախչի: Միսաքեան անմիջապէս դուռը կը կղպէ եւ քանի մը մեծ սնտուկներ կը դնէ դռան ետին, որ չբացուի եւ կու գայ տեղը կը նստի այնպիսի ուրախութեամբ, որ կարծես մեծ շահ մը ըրած է:

Կէս ժամէն դուռը կը գարնուի:

Ո՞վ է ան, կը հարցնէ ներսէն Միսաքեան:

Ես եմ, Համբարձում...եան, գրեց տեսնել կ'ուզէի:

Ջիս տեսնե՞լ կ'ուզէք... դուռը կղպուած է, բանալին քովս չէ, ձեր ըսելիքը կրնաք դուրսէն ալ ըսել:

Հիւրը կը բարկանայ եւ առանց պատասխանելու կը մեկնի: Միսաքեան կը սկսի ծիծաղիլ այն իմաստասէրին պէս, որ օր մը սենեակին մէջ առանձնացած՝ խնդացած ժամանակն երբ կը հարցունեն իրեն, թէ ինչո՞ւ կը խնդաս՝ քովդ մէկը չկայ. կը պատասխանէ, թէ ճիշտ անոր համար կը խնդամ, որ քովս մարդ չկայ:

Բայց այս ուրախութիւնը շատ չտեսեր, դուռը նորէն կը գարնեն:

Միսաքեանը հոս չէ. դուրս ելաւ, երկու ամիսէն պիտի գայ, կը պոռայ ներսէն Միսաքեան:

Երբ գրութեան մը վրայ իւր կարծիքը հարցուի՝ կը պատասխանէ. տղայական բաներու վրայ կարծիք յայտնելու ժամանակ չունիմ եւ դիմացինը կը սաստէ: Իսկ երբ ստիպեն գինքը, որ քանի մը խօսք ընէ՝ կը սկսի հետեւեալ դիտողութիւններն ընել.

«Լեզուն քաջ է, բայց ոճը վատ է. Պօղոս առաքեալին մէկ խօսքը աս տողին մէջ շատ յարմար կու գար: Գրողը պիտի կրնայ գրել, բայց հմտութիւն չունի. հմտութիւն ունի, միտքը բացատրելու կերպը չգիտեր: Ոճը ցամաք է, զարդարուն չէ. գրութեան մէջ ճարտասանութեան կանոն չկայ. կապ չկայ. ուժգնութիւն տալու համար զօրաւոր բառեր չէ կարողացած գտնել. եթէ ասոնք ըլլային՝ թերեւս ընդունելութիւն գտնէր: Իրմէ՞: Քաւ լիցի: Ժողովրդեան ռամիկ մասէն»:

Եթէ գինքը քիչ մը շողոքորթես՝ կ'ելնէ սնտուկը կը բանայ, կտոր մը թուղթ հանելով կը սկսի կարդալ իր մէկ բանաստեղծութիւնն, նախապէս յայտնելով, թէ շատոնց ի վեր գրած է եւ վրայէն գոնէ անգամ մը անցած չէ, թէպէտեւ հազար անգամ սրբագրած է: Իւր քերթուածը կարդացած ատեն զգուշացիր փոնգտալէ կամ հազալէ, վասն զի իրեն թշնամանք կը համարի եւ թուղթը կը ծալլէ, ծոցը կը դնէ: Իսկ եթէ մինչեւ վերջը արժանանայ կարդալու իւր ոտանատրոն՝ եւ առաջարկուի իրեն, որ հանդէսի մը մէջ հրատարակուի այն, պարապ աշխատութիւն է, կ'ըսէ, վասն զի իմ գրածս հասկնալու կարողութիւն ունեցող մարդ չկայ:

Փողոցն ելած ժամանակը միայն չպտտիր, շատ անգամ Օտեան Էֆենտիի, Ստեփան փաշայի, Իսուֆեան Էֆենտիի հետ կը պտտի, ինչպէս նաեւ գրական ասպարէզն ելած ատենն ալ մէկ թելը Հոմերոսին կու տայ եւ միւսը Ովիտիոսին:

Եթէ կը փափաքիք Միսաքեանի դէմքին վրայ ծանօթութիւն առնել, յիշեցէք դէմքերն այն մարդերուն, որոնք օր մը լսելով, որ Դիոգինէս հրապարակի վրայ մարդեր, մարդեր կը պոռար, անոր շուրջը խմբուեցան եւ հետեւեալ պատասխանն առին.

«Ես մարդ կանչեցի. դուք ինչո՞ւ եկարք»: